

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
ԲԱՐՈՋԸ ԳԻՒՄՐԻԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ
7 Դեկտեմբեր 1994

"Յանուն Հոր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամեն"

Տխուր յիշատակներու օր է այսօր: Աւելի ծանր և տխուր բոլոր անոնց համար, ովքեր այդ երկրաշարժի օրը Հայաստան աշխարհի այս երկրամասի մէջ գտնուեցան- Գիւմրի քաղաքն, Կիրովականն, Ստեփանավանն, Սպիտակն, Նալբանդն և տասնեակներով ուրիշ քաղաքներ և գիւղեր: Եւ մօտաւորապէս մեր մէկ միլիոն հայուքիւնը, այդ շրջանակին մէջ ապրող, ենթարկուեցին դժբախտութեան, երկրաշարժի աղէտին:

Եւ այսօր մեր մտքին մէջ հարցումները շատ են: Ինչո՞ւ պատահեց: Ինչո՞ւ Աստուած թոյլ տուեց որ պատահի: Զե՞ր կարող Աստուած այնպէս անել, որ այդ դժբախտութիւնը մեր գլխին չգար: Աստուած ինչո՞ւ բարիներին չի պաշտպաներ և չարիքը թոյլ կուտայ, որ մեր շուրջը տեղի ունենայ: Մինչև անգամ երբեմն կ'ասեմք «ինչո՞ւ համար այս չարիք գործողները անելի յաշտութիւն կը գտնեն կեանքի մէջ, քան բարի մարդերը»: Այս բոլոր հարցումները բնական հարցումներ են, որովհետև շուրջանքի մէջ ենք, որովհետև պատասխանը չունենք: Բայց պատասխանը կայ: Պատասխանը կը գտնենք երբ կը կարգանք Աստուծոյ կամքը: Աստուծոյ կամքը գրուած է Աստուածաշունչ Գրքի մէջ: Աշխարհի ստեղծագործութեան մինչև այսօր Աստուծոյ կամքը եղել է մեզի հետ: Ուրեմն նրանք ովքեր կը հաւատան, նրանք գիտեն թէ Աստուած չարիք չի կամենար: Սա բացայայտ պէտք է լինի: Մեր մտքից երբեք պէտք չէ անցնենք, ասելու համար որ Աստուած թոյլ տուեց որ այս չարիքը պատահի: Ո՛չ, Աստուած թոյլ չը տուեց: Բայց Աստուած թոյլ տուեց որ մարդը ինքը՝ իրեն տրուած միտքով, խելով, իրեն տրուած կամքով, զգացմունքներով, ինքը որոշի որ պիտի ապրի այնպէս, ինչպէս որ Աստուած կը կամենայ: Եւ Աստուած բարի միայն կը կամենայ:

Մեզանից ունէ մէկը չի կարող ասել որ Աստուած ինձ ասաց. «Գնա՛ սպաննիր»: Մեզանից ունէ մէկը չի կարող ասել որ Աստուած ինձ հետ խօսեց և ասեց՝ «Գնա՛ գողութիւն արա. Գնա՛ գինովցիր. Գնա՛ չարիք գործիր. Գնա՛ պատերազմ ծրագրիր. Աշխարհը թող կրակի մէջ մնայ»: Ոչ ոք չի կարող այսպէս յայտարարել: Այդ չարիք գործողները կ'ասեն. «Ե՛ս այսպէս կ'ուզեմ»: Զարիքը ուրեմն այդ ԵՍ-ին մէջն է: Այդ մարդուն մէջն է: Այդ մարդը՝ սովորական մարդ լինի, փողոցների մէջ քայլող, թէ այդ մարդը կարևոր պաշտօնների մէջ լինի՝ իբրև հոգևորական, կամ կարևոր պաշտօնների մէջ լինի իբրև երկրի կառավարող, քաղաքագետ, դիւանագետ, պետական ղեկավար: Նրանք կարող են չարիք գործել: Եւ նրանց չարիքներու վնասը մենք պարտաւոր ենք ֆաշել:

Աստուած չի կամենար չարիքը:

Երկրաշարժը բնութեան չարիքն էր: Բնութեան օրէնքներ կան, որոնք կը կառավարեն երկիրը, երկրի բնութիւնը: Եթէ սա կը վնասի մեզի, այդ չարիքը մենք պարտաւոր ենք ընդունել, բայց ոչ որովհետև Աստուած ուզեց մեզ պատժել: Երբեք: Այդպէս պէտք է մտածենք: Այդպէս եթէ մտածենք այլևս ուրիշ յոյս չի մնար մեզ

ապրելու: Անհիմաստ կը դառնայ ապրելը:

Միւս կողմից սակայն չարիքին և չարին դիմացը բարին միշտ կայ, որովհետև Աստուած միշտ կայ: Եւ մեզանից անոնք որոնք Աստուծոյ մեզի տուած այդ շնորհիք կարող են գործածել, նրանք բարիք պէտք է գործեն, և պէտք է մտածենք որ մինչև անգամ երբ այս երկրաշարժը պատահեց, երբ այդ չարիքը մեր գլխին եկաւ, որքան բարիք ստացանք նոյն ժամանակ: Աշխարհի մէջ կան բարիներ, կան բարութեան հաւատացողներ: Կան բարի գործերին արժէք տուողներ: Եւ պետութիւններն ոգնութեան հասան Հայաստան աշխարհին: Հայեր՝ այս Հայաստան աշխարհի մէջ կամ ցրուած աշխարհի տարբեր երկրների մէջ, բոլորն էլ ոգնութեան հասան: Ինչու: Որովհետև գիտենք թէ բարի գործը տեսական է, յաւիտեանական է: Ի վերջոյ, ի վերջոյ բարին պիտի յաղթի: Այս մեր հաւատքն է: Այսօր ի՞նչ նեղութիւնների մէջ ենք Հայաստան աշխարհի մէջ: Մինչև անգամ երկրաշարժից յետոյ: Արցախի խնդիրներ, շրջափակումի խնդիրներ: Լոյս չկայ, ջուր չկայ, ջերմութիւն չկայ: Ի՞նչ նեղութիւնների մէջ ենք: Բայց դա պէտք է նկատենք բնական հետևանքը այն չարիքին որ պատահեց, այն պատերազմին որ տակաւին կը շարունակուի Արցախի անուցով, շրջափակումի պատճառով, որովհետև չար մտածողները դեռ կ'ուզեն վրէժ լուծել: Սա մեզ հետ է և դեռ պիտի լինի մեզի հետ:

Ուրեմն ի՞նչ պէտք է անենք: Երկու բան կայ անելու: Կա՛մ պիտի ասենք որ մենք պէտք է կորսուենք, ոչինչ անանք, կա՛մ պէտք է ասենք, այս չարիքին հակառակ, Աստծու կամքն է որ մենք պէտք է ապրենք: Այս հաւատքը կարևոր է: Աստծո՛ւ կամքն է որ մենք պէտք է ապրենք, և պիտի ապրենք: Աստծու կամքն է որ մենք պիտի դիմանանք, որովհետև ի վերջոյ բարին պիտի յաղթի:

Մեր հայոց պատմութեան մէջ ի՞նչ նեղութիւններ, ի՞նչ եղեռն, ի՞նչ ջարդեր պատահել են, ամբողջ մեր պատմութեան ընթացքին: Այդ չարիքը պէտք էր մեզ մինչև հիմա ոչնչացներ աշխարհի երեսից: Բայց այն բոլոր չարերը որոնք մեր ազգին ոչնչացումը մտածել են նրանք կորսուել են: Մեծ ազգեր պատմութեան մէջ, նրանք կորսուել են: Վերջինը դեռ այստեղ է, բայց ոչինչ: Այդ չարը պիտի չ'յաջողի:

Պէտք է ասենք որ մինչև անգամ այն եղեռնը որ պատահել է 1915 թուին, և այն միւսը որ գործադրուեց այս վերջին տարիներին, Սումգայիթի, Բաֆուի և այդ շրջանակների մէջ, որ իր կարգին հաւասար էր 1915-ին ծրագրուած եղեռնին, երկուսն էլ հաւասար ոճրագործութիւն էին: Այդ Չարն էլ պիտի չ'յաջողուի: Որովհետև մեր ազգը երթալով պիտի շատանայ և պիտի գօրանայ: Այսօր էլ գօրեղ է: Մեր տկարութեան մէջ ուժեղ ենք: Կը տեսնէք թէ ինչպէս այս գաղափարները մտքին համար մի քիչ անտրամաբանական խօսքեր կը թուան: Բայց ճշմարտութիւնը նրա մէջ է որ, ինչ որ մեր խելով չենք կարող ըմբռնել, Աստծու կամքով կարող ենք ըմբռնել:

Մեզի կը մնայ որոշել թէ ի՞նչ կ'ուզենք անել: Պիտի ապրե՞նք թէ պիտի չապրենք: Պիտի դիմանա՞նք թէ պիտի չը դիմանանք: Պիտի վերաշինե՞նք, թէ պիտի չը վերաշինենք: Բարիք պիտի գործե՞նք, թէ պիտի չը գործենք: Ա՛յդ՝ Աստուած մեզի թողել է: Չենք կարող ասել որ Աստուած կ'ուզէ որ մենք չարիք գործենք, սխալ որոշումներ անենք:

Այսօր էլ աշխարհի մէջ կան բարի հոգիներ, բարի կազմակերպութիւններ, հաստատութիւններ: Ովքեր որ կարող են, մեզի հայերիս իրենց ոգնութիւնը

կ'ուղարկեն, և պիտի ուղարկեն:

Մեր անկախ Հայաստանը, մեր պետականութիւնը հե՞շտ էր ունենալ: Զէ', հեշտ չէր: Բարի՞ է թէ չար: Ոմանց համար անկախութիւն ունենալը չարիք էր գուցէ: Բայց ինչպէ՞ս կարող ես այդպէս ասել, երբ դարերով մենք ուզել ենք ապրել իբրև մարդ, իբրև ժողովուրդ, իբրև հայութիւն, ազատ կերպով արտայայտելու, ծաղկեցնելու, շենացնելու մեր շնորհները: Եւ այսօր երբ ունենք այդ անկախութիւնը, ազատութիւնը, մեզանից ոմանք կը տրուցան ասելով. «էս մեղութիւնների՞ համար էր էս անկախութիւնը»: Էդպէս ասաց Իսրայէլի ժողովուրդը, երբ Մովսէս Մարգարէն Եգիպտոսի գերութիւնից ազատեց իրենց, բայց պէտք էր անապատի միջով անցնէին, մինչև Աւետեաց երկիր հասնելը: Այսօր էլ, հայ ժողովուրդն է նոյն վիճակի մէջ: Ով որ չի կարող իր մեղութիւնները քաշել, իր ցաւը տանել, նա չի կարող առողջանալ: Եւ մենք գիտենք ինչպէս բուժուել, ինչպէս առողջանալ: Դա մեր Քրիստոնէական հաւատքի մեզի սովորեցուցած ճանապարհն է: Այդ ճանապարհը մեզ երբեք չի խաբել:

Այսօր, ճիշտ է, Երկրաշարժից մեր գոհուածների տխուր յիշատակները մեզ հետ կ'ապրեն: Մեր տնագուրկ մնացած ժողովուրդին ցաւերը մեզ կը տանջեն: Այդ բոլորը պիտի տանենք:

Ի՞նչ երաշալի խօսք է որ ձեզանից ամէն մէկը սովոր է ասել, երբ կը տեսնէք մէկը մեղութեան մէջ. «Ցաւոք տանեմ»: Հեշտ չէ ասել «Ցաւոք տանեմ»: Բայց հայ ժողովուրդը կարող է ասել. կամքի տէր ժողովուրդ է, պատմութիւն ունեցող, մշակոյթ, հոգևոր շնորհներ ունեցող ժողովուրդ է: Ամէն տեսակ հալածանքների, մեղութիւնների միջից անցնելով մէկտեղ, ի՞նչ հոգևոր ժառանգութիւն է թողել իր գաւակներին: Հարտարապետութիւն, նկարչութիւն, քանդակագործութիւն, բանաստեղծութիւն, արուեստներ, պար ու երգ, ի՞նչ հարուստ ժողովուրդ ենք: Բայց այստեղ էլ չարը փորձել է միշտ կործանել: Եւ մեր ժողովուրդը հաստատ մնացել է իր հաւատքին մէջ, թէ՛ քարին անպայման պիտի յաղթանակի: Ուրեմն չը ծախենք մեր հաւատքը որևէ մէկ ուրիշ նպատակով կամ պատճառով: Աստուած մեզ ուժ կուտայ, որ մենք մեզ հաւաքենք, մեր տունը շինենք: Շինարարութիւնները որ կը կատարուեն, դանդաղ են: Մէկ տարուայ մէջ չես կարող մի քաղաք շինել: Ոչ էլ տասը տարուայ մէջ: Բայց կը շինենք: Որքան ժամանակ կը շինենք, այնքան մենք հոգիով զօրաւոր կը մնանք, և մեր ուրախութիւնները կը շատացնենք:

Աստուած մեզ շնորհիք տայ, որ մենք մեր ուրախութիւնները շատացնելու մասին մտածենք, թոյլ չտանք որ մեր գաւակները չար ճանապարհի մէջ մտնեն: Առողջ ընտանիքը բոյնն է, արմատն է մեր ժողովրդի հաւաքական կեանքին: Ամէն մէկ հայի տուն մէկ եկեղեցի է, և պէտք է լինի: Այդ եկեղեցիին մէջ պէտք է ծնունեն, մկրտուեն, դրոշմուեն, մեծանան մեր գաւակները, և գործեն: Աստուած թող հաստատ պահի մեր հայրենիքը, մեր ժողովուրդը, մեր բոլոր հաստատութիւնները, մեր բոլոր շնորհալի գաւակները, ամէն տեսակի ասպարէզի մէջ: Եւ մենք կարող լինենք ասել. «Փառք քեզ Աստուած այս օրուան համար էլ. Եւ Քո անունը փառաւորեալ մնայ յաւիտեանս»: